ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022 թվականի թիվ 53-Ա
ք. Երևան

## ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ և 25-րդ կետերի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հրապարակել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Շիրակի մարզի տարածքում սփռման մրցույթի մասնակիցների ցանկը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն Հավելվածի:

2. Սահմանել մրցույթի մասնակիցների հայտերի հրապարակման օր՝ 2022 թվականի ապրիլի 26-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022թ. ապրիլի 21
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2022 թվականի ապրիլի 21-ի թիվ  53-Ա որոշման

ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ՝ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՓՌՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մերի Մկրտչյան Հրաչյայի ԱՁ: